

6. Чистопись

Чистопись

891.99

4-73

ԳԵՐՐԳ ԱՄԱՏՈՒՐ

891. 99

4-78

ՀԱՅԿԱԿԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ

(ԼԵԳԵՆԴԱՐ)

ԱՌԱՋԻՆ ՊՐԱՎ

01 JAN 2009
19 NOV 2010

ԳԵՂՐԳ ԱՄԱՏՈՒՐ



(ԵԳԵՆԴՆԵՐ)

Առաջին պրով



BROS HAL 15.02.2013

30430

ՏՊԱԳՐՎԱԾ Ե
ՊԵՏՀՐԱՆԻ 2-ՐԴ ՏՊԱՎՐԱՆՈՒՄ
ՏԻՐԱԺ 1000 ՈՐԻՆԱԿ
ՊԱՏՎԵՐ № 399
ԳՐԱՎՈՒԵԹՎԱՐ 159-Բ
ՅԵՐԵՎԱՆ
1927

Ն Ա Խ Ե Ր Գ Ա Ն Ք

ԱՐՄԱՎԻ ԿՈՐԻԶՆԵՐԸ

Ոազիսի հեռու ափին՝ Զեք ալ-Լահոռում
Զառամ Ոմար իբն-Ամմառան գետինն եր փորում.
Անապատի տոքոր շնչում քըլունգն եր գնդում
Յեվ կեծ փոշում իբն-Ամմառան հելում ու տնքում...

Կանգնեց հանկարծ արշավասույր շեյխ Սալահ-եղ-դինն
Յեվ սալամով դիմեց նըրան, սանձելով իր ծին.
«Աբու*) Ոմար, ի՞նչ ես այս ըոր ժայռերը կարում,
ի՞նչ ես խղճուկ ալ-Լահոռի խորքերում պտրում»:

Նետեց մի կողմ իբն-Ամմառան իր քըլունգն ու թին
Յեվ պատկառուն՝ փոխ-սալամեց մեծանուն շեյխին.
«Թող յերջանիկ արեվ ժայռա քեզ քո վող կրանքում,
Յա՛ ո ասսուլիֆ**) պերճ շառավիղ, արմավ եմ տնկում»:

«Մինչ քո կորիզն արմավ կըտա, յա՛ Աբու Ոմար,
Քառսուն ծըմրան կընազորդեն քառասուն ամառ.
Միթե՛ այդքան դեռ հույս ունես՝ քեզ արեվ ժայռա,
Վոր քո տընկած արմավսերի ճաշակը քեզ տա»:

*) Արաբերեն՝ հայր.

**) Ռասուլ նշ. մարգարե (Մուհամմեդ).

«Վո՞ւ, շեյխս վըսեմ, շուտ կանցընի կյանքըս մշտակոծ,
Շուտ կընըզե Ազրայիշի^{*}) թուրք իմ տնբոց.

Յեվ կըծըծե մարմնիս հյութերն այս ավազն անհագ,
Սամումը խոլ փոշի կանե վոսկորներս արագ:

Յես կըկորչեմ ախեզերքում ինչպիս ծայն նըվագ,
Ինչպիս այս մե՛ծ անապատում մեկ հատիկ ավագ.
Յեվ թե հասուն իմ տունկը տա արմավ քաղցրահամ,
Սերունդն արդեն չի հիշելու անունըս անզամ....

Գուցե կորիզն իմ արմավի բուսնի, բարձրանա,
Յեվ իմ խղճուկ ալ-վաթանին^{**}) թեթեվ շուք տանա.
Յեվ պատահմամբ անապատից հոգնած կարավան,
Տապից նեղված, գտնե նըրա ստվերում ոթեվան...

Յեվ յերբ ճամբորդն արմավս առնե պապակված բերան
Յեվ հողն որհնե ալ-Լահոռի, փառք տալով նըրան,
Ցնծա՛ թող Դար ուլ-Բաղայում^{***}) իմ հոգին անմար,
Վոր իմ կյանքով փառք շահեցի վաթանիս համար»:

1927 Յերևան

*) Հոգեհան հրեշտակ.

**) Հայրենիք.

***) Արաբերեն Դար ուլ-Բաղա նշանակում են
Տուն Մշտնջենականության (Հանդերձյալ Կյանք):

ՀԱՎԼՈՒՆԻ ԹՈՒՐԸ

Գիշերավարը մի վայրկան նայեց գորշ ամպի տակից
Յեկ իսկուն անցավ հորիզոնի տակ: Գանգուր բլբակից
Պատահի հովի սրբինդն ե շվում: և սրբնի հանդարտ
Կանչին վազում են մալող վոչխարներ: Հաջում են
հատ-հատ

Շըները հեռվում, կորած գառներին գեպի կանչ վարում:
Խավար և արդեն: Տեղ-տեղ աստղեր են փայլում ու
մարում:

Բայց ահա բլրի ստորոտում կայծեց և ծխապարուր
Խարույկը վառվեց: Հեռվ և հեռվում գորշ, կապա-
րաջուր

Ու մառախլապատ Խաչլված ծովը,*) և խորհրդավոր
Լուսո նըշաններ նրա յերեսին՝ շարժուն, ահավոր՝
Փալփալում են մերթ և մարում հանկարծ: Խարույկը
առաջ

Ալեոր հովիմն անդուլ պատմում ե ցուպը գիրկն առած:
Իսկ քարին կոթնած մի յերիտասարդ՝ հոգնած ու
տիսուր

Յեկ փոշաթաթախ՝ լլառում և նրան ուշագիր ու լուս:

*) Խաչլված ծովը (լիճը) կամ կոփը գտնվում է
պատմական Հայաստանի Ապահունիքում (Բուլանդ):

Խարույկի վըսա կաթսան թշթըռում, ծղրիզն և յերգում,
Կրակը ճարճատում, իսկ վերև՝ բըրից՝ սրինգը գեղզե-
Շերուկն եր պատմում:

«Շատ ու շատ դարեր մեզանից առաջ մի թագավոր կար,
Անունն եր Պըռոշ, ինքը զորավոր, ազնիվ ու արդար.
Կրոիվ չեր սիրում. նստում եր խաղաղ նա իր Լաթա-
րում,*)

Բայց նրա վախը տիրում եր հեռու, հեռու տեղերում:
Փառասեր չեր նա, թեպետ կարող եր ամեն բան զորով,
Աշխարհ կըքանդեր, թե վոր սիրտն ուզեր Հավլունի
թըրով:

Հավլունի թուրը, Հավլունի թուրը...
Կանե ամեն բան Հավլունի թուրը.
Չի լինի նրբան աշխարհում նման,
Կանե ամեն բան Հավլունի թուրը:

Ո՛, նա հողեղեն ծեռով չի շինած,
Անձեռագործ ե Հավլունի թուրը.
Չե նա խորասան յեվ վոչ ել ալմաս,
Ալմաս կըկըտրե Հավլունի թուրը:

Կրակոտ ամպերում՝ կայծակների հետ
Միսկել ե կոփիկել Հավլունի թուրը,
Կրակոտ ամպերում՝ կայծակների հետ
Աշխարհ ե իջել Հավլունի թուրը:

*.) Լաթար քաղաքը մոտ քառասուն տարի ա-
ռաջ կիսավեր գյուղ եր:

Ով նըրան տիրե, աշխարհ կըտիրե—
Աշխարհ կըգերե Հավլունի թուրը,
Յալբուս սարն անգամ առաջը կտրե,
Յերկու կես կանե Հավլունի թուրը...

Հավլունի թուրը, Հավլունի թուրը...
Կանե ամեն բան Հավլունի թուրը.
Չի լինի նրբան աշխարհում նման,
Կանե ամեն բան Հավլունի թուրը.

Ահա թե ինչու Պոոշ թագավորից ամենին են սարսում,
Բայց նրբան մտքով մարդու վընասելն անգամ չեր անց-
նում,

Յեվ ո՞վ չեր սարսի—մեծ եր Հավլունի թըրի զորով թուն,
Բայց չեր վորոնում Պոոշ թագավորը փառք, իշխա-
նություն...»

Հանկարծ մթության մեջը կունչեց մի բան վերեկում,
Արձագանգ տըլին մի քանի կըսանչ թուլացած՝ հեռվում:
Արզուք վայրենի սագեր զարթեցան հանկարծ շամա-
րուտում,

Թե՛ չըլող կոռունկներ զըլուց հն անում իրար հետ
ողում...

Ծերուկը հանկարծ ընդհատեց իրան ամպերից հնչած
Ուար ձայներին նա ականջ զըրից, ապա ըըշնջաց.
«Լավ լըսիր, ճամբարդ, քաջքերն են խոսում հեռու
իսպառում.

Քաջքն ել մարդու պես ծնվում ե, մեռնում, ատում
ու սիրում:

Ամեն մի գիշեր կըլըսես այստեղ ձայներ սպառնալի.
Կարծես գայլ վոռնաց, մարդ հարայ կանչեց, մանուկ
ե լալի.

Կարծես ձուկ խըփեց իր տըտով ջըրին, բռւն թըռավ
սպում...
Այս ըոլորն և ոռւռ—քաջր և ամհն տեղ, քաջրն և
այդ անում:
Նա ողն և յելնում, սահում թեկրով, կամ խաղում
ջըրում,
Կամ տափում լալիս չախկալի նըման, գայլի պիս վոռ-
նում,
Կամ կաղկանձելով շըներին ծազրում, խելքից և հա-
նում,
Կամ թմբուկ զարկում ու ծովում իրան հարսանիք
անում...
Շատ բան կըտեսնես մեր ծովի ափին, շատ բան կըլը-
սես...
Ուրիշ ծով և սա: Լսիր, թե ինչեր պատմելու եմ քեզ.

«Վոյոք ըլգիտեր, թե բանի տարի Պոռշի պապերը
Միշտ վորդոց վորդի ժառանգում եյին չավլունի թուրը,
Թե ինչ հրբաշըռով ընկել եր այն թուրն աշխարհի վրան,
Թե վորը Պոռշի մեծ նախնիքներից տիրացավ նըրան:

Դիտեյին միայն, վոր նըրանախնիք տարիներ, դարեր
Այդ զորությունը, այդ ուժը չեյին չարի գործ դրբել ..
Պոռշն ել հետեւեց իր նախնիքներին, ստանալով թուրը,
Հոր մահվան ժամին դողդոջուն ծայնով խոստացավ
հորը.
«Յերդը մեմ հա՛յր, քո արված թըրով, վոր բեզ
հետեւեմ.
Զարի կործանիչ, բարու հաստատիչ յես միայն լինեմ»

Այդպես ել արավ, Քառասուն տարի Պոռշի ձեռին
Հավլունի թուրը փայլում եր ինչպես կալճակ յերկ-
նային,
Բայց նըրա ծեռքից անմեղի արյուն յերբեք ըթթափեց,
Կայքից ու կյանքից թըրի միջոցով մարդ ըզգրկըվեց.

Վոր մի բռնակալ նըրա ժամանակ հանդես դուրս չեկավ
Յեվ վոչ մի ուժեղ իրանից թույլին զըրկել սիրտ արավ.
Ինչ բան բարի յեր, ծաղկեցնում եր նա իր հըզոր ծեռով,
Ինչ բան վոր չար եր, զնջում, կործանում Հավլունի
թըրով...
Յեվ ի՞նչ չեր անի—մեծ եր Հավլունի թըրի զորություն,
Բայց չեր վորոնում Պոռշ թագավորը փառք, իշխա-
նություն...

«Թող ապրեն խաղաղ,—ասում եր նա միշտ,—բազ-
մանան մարդիկ,
Լաթար բաղաբըս լավ կառավարեմ, այն ել և հերիք»:
Յեվ լիանում եր Լաթար բաղաբը ամեն բարիքով,
Զգվում շենացած Խաչըվա ծովի կանաչ ափերով:
Յեվ գեղեցիկ եր Խաչըվա ծովի: Նրա ջըրերը
Զինչ եյին, հանգիստ, ինչպես յերկնիքի կապուլո յե-
թերը...»

Բայց ի՞նչ կա հաստատ, հավիտենական մեր յերկնիքի
տակ...
Պոռշ թագավորի սեվ-սեվ մազերն ել դառան ըստիտակ.
Այն հըզոր ազը, վոր վող աշխարհին սարսափ եր բե-
րում,

Թուլացավ այնքան, Հավլունի թուրը վերջնել չեր
կարում:

Ընկավ Պրոռշը, բնկավ հուսահատ մահվան անկողին,
Բզզաց, վոր շուտով մահվան հրեշտակը կառնել իր հոգին:

Մտածում եր նա, «Ահա՝ մոտեցավ իմ վերջին որը
Ռում անեմ ժառանգ, վո՞րին ավանդեմ Հավլունի
թուրը:

Յոթ վորդի ունեմ յոթ սարի գլխին յոթ բերդի իշխան,
Յոթն ել չար, քինոտ, յոթն ել ծարավի իրարու արյան:
Վո՞րին տամ թուրը, վոչոր նըրանցից չե թրբիս արժան,
Իմ մահից հետո արյան նեղեղներ պիտի ընթանան...
Յեկայն թուրը, վոր ազգանքշան եր լոկ խաղաղության,
Իմ մահից հետո կրդառնա պատճառ. յեղայրսպանու-
թյան:

Վո՞չ, այդ չի լինի. նա մինչեվ հիմա դեռ չի յեղել չար,
Զբախի լինի իմ մահից հետո ել չարի պատճառ:
Շուտով կրթողնեմ յես այս աշխարհը անկայուն յեվ մին,
Թող ել ըմբնա Հավլունի թուրը յերկրի յերեսին»:

Յեկ նա հրամայեց կանչեն մեծ վորդուն. Ու շտապից
վորդին:

Բրլեզան բերդից լրսելու իր հոր կրտակը վերջին:

— Մեռնում եմ, վո՞րդի, իմ վերջին կրտակն հայտընում
եմ բեզ:

Միայն դեռեվրս իմ մահից առաջ պիտի կատարես:

— Հայր իմ, պատրաստ եմ, բո վերջին կամքը յես
կըկատարեմ,

Տուր ինձ Հավլունի թուրը, թե կուզես, աշխարհի
բանդեմ:

— Այո՛, քեզ կտամ Հավլունի թուրը, աշխարհ մի՛
բանդիր,

Տա՛ր դու Հավլունի թուրն ու Խաչըվա ծովը շպար-
տի՛ր:

Առավ մեծ վորդին Հավլունի թուրը, բայց հորը խա-
րեց.

Վոչ թե ծով նետեց, այլ հորից ծածուկ մի տեկ
թազգրից:

— Վորդի՛, ի՞նչ արիր Հավլունի թուրը.
Գըցեցի՞ր արդյոք Խաչըվա ծովը:

— Այո՛, այո՛, հայր, Հավլունի թուրը
Տարա, գըցեցի Խաչըվա ծովը:

— Պատմի՛ր, ի՞նչ արավ Խաչըվա ծովը,
Եկրբոր գըցեցիր Հավլունի թուրը:

— Հայր, վոչինչ չարավ Խաչըվա ծովը,
Բայց յես... գըցել եմ Հավլունի թուրը:

— Վո՞չ, սուտ ես ասում, սո՞ւտ, յես լավ գիտեմ.
Անարժա՞ն վորդի, խաբում ես հորը.
Գընա՛, բե՛ր շուտով, թե չե կանիծեմ,
Գլխիդ կընարի Հավլունի թուրը...

Յեվ սարսափահար վորդին յետ բերեց Հավլունի թուրը:
Իր յերկրորդ վորդուն հրամայեց կանչեն Պոռշ թա-
գավորը:

- Մեռնում եմ, վո՞րդի, իմ վերջին կըտակն հայտը-
նում եմ քեզ
Միայն դեռեվբս իմ մահից առաջ պիտի կատարեա:
- Հա՛յր իմ, պատրաստ եմ, քո վերջին կամքը յիս
կըկատարեամ.
Տո՛ւր ինձ Հավլունի թուրը, թե կուզեա՝ աշխարհը
քանդեա:
- Այո՛, քեզ կըտամ Հավլունի թուրը—աշխարհ մի՛
քանդիր,
Տա՛ր դու Հավլունի թուրն ու Խաչըվա ծովը շպրտի՛ր:
Առավ նա նույնպես Հավլունի թուրը, բայց հորը
խաբեց.
Վոչ թե ծով զբցեց, այլ հորից ծածուկ մի տեղ թագ-
ցընեց:
- Վո՞րդի, ի՞նչ արիր Հավլունի թուրը.
Գցեցի՞ր արդյոք Խաչըվա ծովը:
- Այո՛, այո՛, հայր, Հավլունի թուրը
Տարա զբցեցի Խաչըվա ծովը:
- Պատմի՛ր, ի՞նչ արավ Խաչըվա ծովը,
Յերբոք զբցեցիր Հավլունի թուրը:
- Հա՛յր, վոչինչ չարավ Խաչըվա ծովը,
Բայց յիս... զբցել եմ Հավլունի թուրը:
- Վո՞չ, սուտ ես ասում, սու՛տ, յա լավ գիտեմ,
Անարժա՞ն վորդի, խաբում եմ հորը.

Գընա՛, բե՛ր շուտով, թե չե կանիծեմ,
Գլուխու կընաբի Հավլունի թուրը:


Յեվ սարսափահար վորդին յետ բերեց Հավլունի թուրը:
Եթի յերրորդ վորդուն հրամացեց կանչեն Պոռշ թագա-
վորը:

Բայց յերրորդ վորդին, հաջորդ յերեքն ել միեվնույնն
արին,
Մինչեվ վոր հերթը հասավ յոթ վորդուց ամենքից
փոքրին:

Յեկավ յեվ փոքրը, Վորդի՛, դու զիտես, ի՞նչեր եմ ա-
րած,
Բայց, տե՛ս, մեռնում եմ յոթ վորդկերանցով, յեվ
անտերացած.
Գոնե դու լըսիր վերջին կըտակլս, աղերսում եմ քեզ.
Միայն այդ կըտակն իմ մահից առաջ պիտի կատա-
րեա:

Յեվ հուզվեց վորդին:—Հա՛յր իմ, յերդվում եմ, յիս
կը կատարեամ.
Հրամայի՛ր, կուզեա՝ յիս ինձ Խաչըվա ծովը կը նետեմ:
— Վո՞չ, վո՞չ, չեմ ուզում, վո՞րդյակ իմ, դու քեզ ծովը
մի՛ նետիր.
Կըտամ Հավլունի թուրը, ա՛ռ դու այն, յեվ ծով ը-
պրտի՛ր:

Որը ուրբաթ եր, Առավ նա թուրը յեվ ծովը նետեց:
Դարձավ դողում եր վորտորդի ծեռքից փախած քոշի
պես...



— Վորդի՛, դողում ես, ասա՛, ի՞նչ արիր,
Քըցեցի՞ր ծովը Հավլունի թուրը:

— Հա՛յր իմ, սարսում եմ, ել մի՛ հարցընիր.
Ո՞հ, ինչե՛ր չարավ Հավլունի թուրը ..

Մոտենում եյի դեռ յեվըս ծովին,
Յերբ արեմս ամպում զըլուխը ծածկեց.
Յերկնքից իջավ սատանի քամին
Յեկ դաժան խավար աշխարհը պատեց:

Մոտեցա ծովին: Ա՛յս, սիրուն մեր ծով...
Սյլեվըս ըուներ նա զույնը նախսկին.
Ժանտ դեվ եր կարծես, պղտոր զըրերով
Ուզում եր կուլ տալ իր վորսը անգին:

Յես ծով զըցեցի Հավլունի թուրը
Յեկ հանկարծ զուոց ծովի հատակից,
Մեծ իրարանցում բարձրացավ խորը,
Ահեղ արծագանգ ծայնեց յերկնքից:

Զըրեր լեռնացած իրարու անցան,
Յերկնք նետեցին ծովի փրփուրը.
Հանկարծ բացվեցին, մի բերան դարձան,
Կուլ տրվին խկույն Հավլունի թուրը...

Հսկավեց վորոտ, շանթերի նետում
Յերկնքից ծովին, ծովից յերկնքին...
Իմ վոտքերի տակ յերկիրն եր դողում.
Յես ել թուլացա յեկ ընկա գետին...

Յերբ ուշրի յեկա, վոչինչ ըլ տեսա:
Գիշերվա մրոայն աշխարհ եր պատել,
Ալիքներ, ամպեր դարսած իրար վրա,
Յերկինքը յերկի հետ եր միացել:

Ծովի խորքերից դեռ բյուր-բյուր ծայներ
Խուլ խոր ու խառնակ վորոտում եյին.
Կարծես բյուրավոր բազքերի գնդեր
Ծովի հատակում մարտնչում եյին ..

— Հերիր ե, վորդի... դու կատարել ես... ա՛ռ իմ
որմնություն...
Մեռնում եմ հանգիստ... Լամթար բաղարըս բեզ ժա-
ռանգություն...»:

Ծերուկը լըսեց խորը մըտասուզ: Ազա նա կանչեց.
«Մըկն, ցած արի»: Հովիվ պատանին սըրինդն ընդ-
հատեց
Յեկ իջավ րլրից: Խարուէկից առան քըլքըլիող կաթ-
ան:

Ծերը հացն որհնեց և քարի շուրջը սեղան նստեցան..

Ծերուկ հովիվը պատմում եր նորից. իսկ խոտ-մա-
ցանում
Հովն եր սըկություն: Կրակն եր ցոլցոլում և լուսավո-
րում

Բլրակի լանջին տարածված հոտը: Գիշերվա ցրտի
Աղղեցության տակ գառներն ուղղնում են մարմինը
Բըզի,
Թափեթուփ գալի և քընի հարմար տեղ են վնտըռում.

կոծում են հանգիստ շըներն զոսկորներ, դնչները քում
ըռւմ:

Անթիվ ծղրիդներ անհաղ ձըսձըսում, կրակն և ճրթում
Սըրինդը շըփաց բլրակից նորից: Ծերուկն եր պատմում:

«Անցան տարիներ յեվ դարեր անհետ ..
Շատ բան աշխարհում փոխվեց ու զընաց...
Պոռշի սերունդն ել նըրա մահից յետ
Նըրան հետեւեց - վոչոր ըը մինաց:

Բայց այսոր ել մեր սրտում չի մեռել
Մեծ խաղաղասեր Պռոշ թագավորը.
Նըրա հետ մեկտեղ կենդանի յե դեռ
Խաչըրվա ծովում Հավլունի թուրը...

Կար մի ժամանակ - ծով եր սա հանգիստ
Յեվ սիրուն եր բանց իր Նազիկ *) քուրը,
Բայց նա պղտորվեց, հուզվեց այն որից,
Յերբ այնտեղ ընկավ Հավլունի թուրը:

Ուզո՞ւմ ես սըրա պատճառն իմանալ -
Քաջքեր են կռվում ծովի հատակում,
Քաջքերն են ուզում թրբին տիրանալ,
Քաջքերի կռվից ծովի ե աղմբկում: -

Յերքոր Պըսոշի յոթերորդ վորդին
Ուրբաթ որն առավ Հավլունի թուրը,
Դեռ չեր մոտեցել նա ծովի ափին,
*) Նազիկ ծովը (լիճը) նույնպես գանվում և Ա-
պահունիքում:

Յերբ իրար անցան ծովի բաջքերը:

Կըուիվ, կռտորած ընկավ նրանց մեջ,
Թուրըն ընկդմվեց Խաչըրվա խորը,
Բայց անել կռվում վոչոր ըը հաղթեց
Յեվ անտեր մընաց Հավլունի թուրը:

Ահա այն որից ամեն մի ուրբաթ
Խաչըրվա ծովը յետում ե, կատղում,
Իրար են զարկում զըրեր յետնացած,
Ծովի խորերից ձայներ են լավում...

Սյդ հին կրուիմը են կրկին նորոգում,
Բախվում են իրար բաջքերը կրկին...
Անցնում են դարեր՝ կռվում են, կռվում,
Զեն կարում տիրել Հավլունի թըրին...

Հարգանքով նայիր Խաչըրվա ծովին,
Հարգանքով հիշե՛ր այս պղտոր զուրը,
Հիշե՛ր, հեյ ճամբորդ, սա ծով ե անզին
Սըրա մեջն ե մեծ Հավլունի թուրը.

Հավլունի թուրը, Հավլունի թուրը...
Կանե ամեն բան Հավլունի թուրը.
Չի լինի նըրան աշխարհում նըման,
Կանե ամեն բան Հավլունի թուրը ..

մնդ առավ ծերը, խորը շունչ քաշեց և ձեռքը մեկ-
նած
Կալի մութ ծովը՝ «Նայի՛ր դու այն կողմ» հանկարծ
2ընջաց:

Յեվ խորհրդավոր Խաչըլըվա ծովը ցընցըվեց, հեաց,
իսկ հեռու, հեռու բարակ ու գալուկ լուսինն յերեաց...
Հանկարծ ալեծուփ ծովը պատառեց մի շերտ լուսա-
վոր,
Ծալըն ծայր անցավ... և նորից մթնեց ծովը ահա-
վոր:

Ծերունի հովի գեմքին խորիմաստ ժըպիտը խաղաց.
Նա բացականչեց՝ «Հավլունի թուրը ծովի տակ, շողաց»,
Նըրա աչքերը կայծեցին մթնում, զուրխը թափ տըպից
Յեվ վոգիվորված՝ սպառնալի ձայնով նա շարունակեց.

Բայց Պըռոշ արքան թուրն ե կախարդել,
Վոր յերբ ցամարի Խաչըլըվա ջուրը,
Պիտի մի կտրին ծնվի վոսկեհեր,
Ասարծու կամքով առնի այն թուրը.

Կառնի այն թուրը, կը վերականգնի
Հուզված աշխարհի մեջ խաղաղություն,
Յերբ ուժեղ ու թույլ այնտեղ չեն լինի
Յեվ կը տիրե մեծ հավասարություն...

Հավլունի թուրը, Հավլունի թուրը...
Կանե ամեն բան Հավլունի թուրը,
Զի լինի նրբան աշխարհում նրման,
Կանե ամեն բան Հավլունի թուրը....»

Ծերուկը լըսեց, կախ զըցեց զլուխը խոհուն, ալե-
գարդ,
Նախեց կըրակին—մոխրաքող կըրակը փայլում եր հան-
գարտ:
Վոչխարներ, շըներ ննջում են հանգիստ, կուչ-
ումուչ արած.

Յեվ յեղամն իշնում՝ պապըլին տալով՝ ծածկում ե
նըրանց:
Ծեր գամփուը միայն յերբեմն անհանգիստ՝ հեռուն ե
դիտում,
Փորձված, կասկածուա՝ քիթը բարձրացնում, ողն է
հոտոտում.
Իսկ ըլլից ջահել հովի սըրինդն ե գեռ շըվում, սա-
հուկ ըլլից ջահել հովի սըրինդն ե գեռ շըվում,
Յեվ ծղրիդների անթիվ յերամն և նըրան ձայն պա-
հում...

Ծերուկը յերկար լուս ու մըտախոն նայում եր մոխ-
րին,
Ապա ընկճըլած ձայնով հարց տըվեց իրան մտքերին.
Ապա ընկճըլած ձայնով հարց տըվեց իրան մտքերին.

«Բայց ահա վորքա՞ն դարեր են անցել,
Ուզ կարա հաշվել Պըռոշի մահից...
Յեվ ինչո՞ւ, ինչո՞ւ մինչեվ հիմա դեռ
Մի կաթիլ անգամ չե պակսել ծովից...»

Մարել ե կըրակն արդեն ըլլի տակ: Լուս ե շըջակայք:
Ննջում են վաղուց ամենքը հանգիստ տաք չուկերի
տակ:
Լուս են շըջակայք: Լովում ե միայն խոըմփոց գու-
րախ
Յեվ ծղրիդների սիրերզը անուշ: Իսկ խորհրդավի

լուս ու ստվերներ դեռ մասախլապատ ջըրերն են
հուզում

Խաչլըվա ծովին Քաջքերն յերեկի քընել չեն ուզում...

1886 թ. Պետերբուրգ.

ՅԵՐԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՎԻՏԸ

«Հավլունի թուրք» տաղած և առաջին անգամ 1887 թվական
«Սղբիւր» տմսագրի մայիս ամովա համարում:

Հեյսիրուն Սրազվա, վոր գալիս ևս Մթիուլեթյան
բեռներից...

Վոստոսում ես դու ժայռերի վրայով հըռհը-
ռալով-ծիծաղով կայտառ մանուկի նըման յեկ քո
ցնցուղները մայր մտնող արեգակի տակ կանաչ-կար-
միրն են կապում:

Սահում ես դու մամուապատ բարերի վրայով
յեկ քո զրերը զմրուխտանում են:

Աննման ես դու խաղաղ լուսընկա գիշերները,
յերք անտառների միջով անցնելիս՝ կանգ ես առնում
կարծես առափան շունչ բաշելու, Բարձր չինարիները
քո յերկու ափերից թերփած զրբկը վում են ճյուղերով.
Նարանց արծաթագույն սաղարթի միջից ցած ե նա
յում ժպտուն լուսինը, յեկ նրա պատկերը հանդատ
դողդողում ե քո ծփացող զրերում...

Բայց, ավա՞զ, դու այլպես չես Սատանայի Հով-
տի մեջ. այնտեղ դու զազազած զազանի յես նմանում
Յերկու կողմից մռալ ժայռերը խեթ-խեթ նա-
ում են իբար. նրանց ստորոտում մռնչում, փրփը-

բում ես դու, զիրց զբերը խփում քեզ ննշող ժայռերին յեվ հառաջում փշրված ալիքներով...

Յեվ քո հառաջին արձագանք են տալիս մութ ժայռերի խորեերը :

Զարհութեղի յե Սատանայի Հովհանքը. յերկինքն
անգամ չե ցուց տալիս նրան իր կապուտակ դեմքը.
ամպերն ու մառախուղն են բուն դրել ա'յն ժայռե-
րում, վոր ծնում են միայն կայցակներ ու մրրիկ...»

Զարհութելի յե Սատանալի Հովհանը մանավանդ-
փոթորկի ժամանակ. ցածում զոռում և ճնշված Ա-
րագվան. նրան արձագանքում և շրվշրվալով ու մր-
ունչալով անսանծ փոթորիկը. դղրդում են շրջակա
ժայռերը.. կատաղած տարբերի պայքարի ծայնը
լսվում ե հեռու, հեռու....

Յեվ ուզմավիրական խնայղիով անցնող ճամփորդը սարսափահար՝ յերեսը շուռ և տալիս այդ տեղից նրան Երոն կառագանք նախազգուշացնում է, վոր անցնում են Սատանայի Հովտի մոտով. . .

Գուղ լեռան լանջերը ծածկված եյին շքեղ կա-
նաչով, վրբոնց միջից դուրս եյին նայում տեղ-տեղ
լ եռնային շուշանիր, վայրի նարգիզը, մանուշակը..

Ցածում ժայռի տակից գուրս եր բղխում Անմահական Աղբյուրը, վորի կողքին ծեփած եր իրոնների առւլ՝ կուսական անտառով շրջապատված, Անտառի թափուտներում վիստում ելին կիստարն ու յեղերուն. Ժառերի վրա յերգում ելին բլբուն ու զարվատիկը^{**})... Այո՛, երաշալի յեր այն ժամանակ հովիար - նըրան հովանավորում եր ինքը Գուղը՝ լեռնային վազին ^{**1)}:

**) *புராணக்ரஹா நூல் சித்தங்கள்*

*** Հեռնային վոզի գուղի մշտական բնակա-
վալը գուղ լեռն է:

Յեվ իրոնները՝ առւլի բնակիչները՝ կարիք չունեյին այն ժամանակ պարապելու ավազակությունով ու թալանով կթան յեղնիկն անտառից գալիս համարձակ մոտեցնում եր ծծերն իրոնին. յեղերուն զզալով ճակատազրից վորոշված իր մահվան ժամը, խոնարհեցնում եր վիզը մարդու առաջ... Վոչինչ չեր պակաս բնակիչներին—վո՛չ յուզ, վո՛չ մածուն, վո՛չ խորոված հսկ մազից ու բրդից իրոն կանայք յափընջիք ու բալաբաններ*) եյին պատրաստում։

Էմպում եյին իրոններն Անմահական Աղբյուրի ջուրը յեվ ապրում հարյուր-հարյուր տարիներ... :

Առւլի մեջ ապրում եր ծերունի Դուդարն իր Դոսաննա աղջկա հիսու։

Գեղեցիկ եր Դոսաննան. իրոնատանում չեր ծընված նրա նման չնաշխարհիկ եակ. Նրա աչքերը կապուտակ եյին, ինչպես Յերանության Հովտին նայող ջինջ յերկինքը. Նրա մազերը կարծես վոսկեզոծ եյին. սպիտակ եր նա յեղնիկի կաթի նման. խոսում եր այնպես անուշ, ինչպես վարդից արփած բլբութքայում եր թեթեվ, ինչպես լեռնային այծյամ։

Յեվ անման Գուդը սիրահարվեց նրան։

Դեռ մանուկ ժամանակ Դոսաննան դուրս եր զալիս առավոտներն աղբյուրի մոտ լվացվելու, յեվ Լեռնային Վոզին ջուրն եր զցում գունավոր բարեր ու բյուրեղներ, վոր Դոսաննան հետևերը խաղա. Գնում եր Դոսաննան լեռան ստորատ ծաղիկ հավաքելու, յեվ

Դուդի հրամանով՝ նրա վոտների տակ բացվում եյին ամենապայծառ յեվ անուշաբուլը ծաղիկները, Բարձրանում եր նա լեռան լանջով, յեվ լեռը հարթում եր իր ժայռերն ու զառիվայրերը...:

Յեվ ինդուշ*) ավազակը՝ անցնելով մոտից՝ ձոռանում եր առժամ իր չար մտադրությունը, կանգնեցնում եր փրփրերախ ծին ու հրճվանքով նայում եր փերի նման մանկանը, վոր թեթեվ-թեթեվ ժայռից յայտ եր վոստոստում։

Գնում եր Դոսաննան անտառ զբոսնելու, յեվ Լեռնային Վոզին կանչում եր դրախտալին թուշուններին, վոր Դոսաննայի համար հրաշալի մեղեղիներ նրանց... Յեվ այնտեղ՝ թափուտների խորհրդավոր վագեն... Յեվ Դոսաննան ծիծաղում եր ու ծաղրում ալեվոր ծերուկինն...:

Յեվ Դոսաննան թագուհի յեր ամենահզոր Գուդի պետության մեջ։

Բայց տարիներն անցնում են ու չքնաղ Դոսաննան արբունանում ե, նրա աչքերը լցվում են խոհերով ու զգացմունքով, յեվ վաշը նրան, ում նայեր նա իր հրաշալի աչքերի խորքից...:

Նրա անունը հնչում է ամբողջ Իրոնատանում։ Ծերունիները ճարտար լեզվով զովում են նրա գեղեցկությունը, վոզեփորում մատաղահասներին, հրազդակությունը, զեղեփորում սիրազարծություն Դոսաննայի հրում նրանց զեպի սիրազարծություն համար. Յեվ մատաղահասները սիրուն արժանանալու համար. Յեվ մատաղահասները մրցում են իրար հետ ու հարսնախոսներ ուղարկում Դուդարի մոտ. Մեկը պարձենում է գեղեցկությամբ, մեկը՝ հարստությամբ, մեկը՝ ծագումով, մեկը՝ քա-

*) Տրեխներ.

*) Կովկասի լեռնային ժողովուրդներից մեկը։

զությամբ... Բայց շատ շատերն ելին հառաջում ու արտավում, յերբ համոզվում ելին, վոր պարծենարու բան չունեն յեվ քնաղ Դոսաննան անժամանդի յն նրանց համար:

Սրտասվում եր յեվ ալեվոր Գուգը, յեվ նրա արաւառքի առուները լեռան ջրս կողմից թափվում ելին հովիտը. արտասվում ել նա, վոր մաճկանացու չեր ծնվել մատչելի դառնալու համար Դոսաննային: Ո՞վ զիտե՛ ումն և նա սիրում, ով պիտի նրան տիրանա:

Թագավորյան կիրճը*) հետզիետե սեղմվելով, կազմում ե մի խոր նեղանցք, վորի յերկու կողմը բարձրանում են անմատչելի ժայռեր, ժայռերից մեկի վրա մինչեվ հիմա ել յերեվում են հին ամրոցի ավերակներ:

Այն ժամանակ, յերբ կենդանի յեր Յերանության Հովիտը, այդ ամրոցում ժըմբերվում եր կյանքը. Ամրոցի իշխանն եր թագավորյան Սեվ-Զիավոր Արագվան:

Քաջ ու խիզախ եր Արագվան: Նրա գնդակն ամպերից ցած եր տապալում արծվին: Նրա դաշույնը թրաշում եր պողպատ: Նրան հանաջում ելին ամենը՝ Ղազիբեզից սկսած մինչեվ Յալբուր. Ղարաբղոյի***) զուռզ իշխաններն անզամ բաշվում ելին նրանից:

*) «Թագավորյան կիրճ» հուն և հոռմայեցի ուստիմիչների լիշտած «Կովկասյան գուներն» եւ

**) Փոքրիկ լերկիր հուսիսալին կովկասում:

Նա ծագում եր հայոց թագավորների *) սերնդից յեվ այդ պատճառով բոլոր իրոններից իրան բարձր եր համարում: Վոչ մի մաճկանացու չեր հանդգնի անցնել թագավորյան կիրճից առանց նրան հարկ տալու:

Նրա աչքերը սեվ ելին, ինչպես սեվ սաթը, միթրուքը սեվ կապի նման, հասակը՝ չինարի, ջերը՝ կաղուու արմատները: Ո՞վ կը մրցեր նրա հետ:

Սեվ ե նա վրտից մինչեվ զլուխ. սեվ ե նրա փափախը, սեվ ե նրա յափնչին, սեվ ե նրա նժույշը, զուր չեն նրան Սեվ Զիավոր անվանում:

Յեվ Սեվ-Զիավոր իշխանը Դուլարին հարմատախոս ե ուղարկում ու խոստանում իրադ**) տալ «տասնութ անզամ տասնութ վոյչսար»:

Արագվան հաղթում ե իր բոլոր ախոյաններին: Ծերունի Դուլարն ընդունում ե նրա իրադը յեվ չնաշշարհիկ Դոսաննան նշանվում ե Սեվ-Զիավորի հետ: Խարհիկ

*) Իրոնական ավանդությունը պատմում ե, վոր Հայոց թագավորի մի տղա, «Թագավոր» անունով իր լեզբակը կամ կապակը վրեժինդրությունից ազատվելու համար, իր մարզիկներով գաղթում, գալիս ե Իրոնստան և հաստատվում այնտեղ: Նա շուտով տիրում ե իրոններին և խառնվում նրանց հետ: Սրանից ե առաջանում ըին և թագավորյան ցեղը, վոր իրոնների նշանավոր ցեղերից «Թագավորյան» ցեղը, վոր իրոնների նշանավոր ցեղերից «Թագավորյան» կիրճը: Կովկասյան գուները կոչվեց «Թագավորյան կիրճ».

**) Գլխագին (բաւըդ):

Հարսանիքը Վասկիրկիի^{*)} տոնին եւ լինելու:

Թագավորյան իշխանն սկսեց հաճախ այցելել իր հարսնացուին յեվ ընադ Դոսաննան տարվեց ահարկու զիգիթով: Նա սիրեց առաջին անգամ...

Յեվ տիսրեց Լեռնային Վոզին: Գուղ լեռան լանջի շրեղ կանացը ըորացավ, ծաղիկները թառամեցին. նրա ճակատը մոռայլվեց. ել չեյին հեռանում նրանից մութ կապարագույն ամպերը...

Վրդովից Գուղը, վոր մի չնչին մահկանացու կարողացավ գերազանցել նրան, խլեց իր սիրած Դոսաննային:

Նա յերդվեց վիեժխնդիր լինել...

Անցավ ամառը. Յեկալ սեպտեմբերն ու նրա հետ յեկան ցըրտերը կովկասյան լեռներում: Շուտով կը գա յեվ Վասկիրկին:

Զարթեց Սրագվան իր ամրոցում. զենքերը վըրան առավ, թամբեց սեվ նժույզն յեվ յափնին վըրան զցելով դուրս յեկալ ամրողի դռներից: Նա զընալու յեր իր հարսնացուի տեսության:

Հրաշալի առավոտ եր: Ծագող արեվի ճառագայթները պատառելով բաց-վարդագույն ամպերը, վոսկեղոծեցին լեռների սառցային գագաթները: Կապուտակ մշուշը. հովիտներից ու կիրճերից բարձրա-

^{*)} Երոնների ազգային տոնն եւ ի պատիվ Վաստըթիի (սուրբ Գևորգ), կատարվում եւ աշնան վերջերին:

նալով՝ սկսեց ալիք-ալիք ծփալ լայնատարած ծովի նման յեվ հեղեղեց անսահման տարածություն: Միայն լեռների վոսկեղոծ գագաթներն եյին, վոր լող եյին տալիս մառախուղի ծովում՝ մերթ խորասուզվելով, մերթ բարձրանալով ծովի յերեսն ինչպիս լողվոր կրղ-զիներ. իսկ բարակ, վարդաշղարշ ամպերը մերթ կմնգ եյին առնում հովանու նման այդ գագաթների գլխներին, մերթ վլոր-մորր գալով իջնում, պատառում եյին կապուտակ մշուշն ու խառնվումնրա հետո... Սրեմս սկսեց կամաց-կամաց բարձրանալ յեվ... հանկարծ՝ վիթխարի լեռները ներկայացն ամբողջ իրանց վիճ կառուցվածքով...

Սրագվան անցնելով թագավորյան կիրճից, մըտավ Գուղի պետության սահմանները:

Յեվ յերեվաց նրան գոռոզ Վոզին մառախուղով շրջապատված: Գուղի աչքերում թագնված եր վրեժ-դիրնդրության կրակն ու հաղթանակի հեղինական ժրակարը: Նրա յերկար յեվ ալեվոր մազերը, բեղն ու պիտոքը հառնվում եյին մառախուղի հնատ յեվ անհետանում նրա մեջ ...

Ցնցից Սեվ-Զիավորը: Առաջին անգամ եր նըրան տեսնում....

Յեվ սկսվեց Գուղի յեվ Սրագվայի կոփիը: Մառախուղը բուլա-բուլա դուրս եր գալիս յերկ-րի շերտերից ու խտանում: Մթնեց ամեն բան. թագ-նըգեցին յերկինքն ու յերկերը. մի բայլ տարածունը վրա չեր կարելի վրացել արդյոք անդունդն եթյան վրա չեր կարելի վրացել արդյոք անդունդն եթե թշնամի չաշնամի^{*)} խանչալը: Զեր յերեվում առաջդ, թե թշնամի չաշնամի^{*)} խանչալը:

^{*)} Հյուսիսային Կովկասի լեռնական ժողովուրդներից մեկը:

Հանկարծ լսվեց վազրի մռնչուն ու կատաղած գազանը մեկ վոստյունով թռափ թամբի վրա: Բայց զնկաց Սրազվայի դաշույնը ու կործքը պատառած գազանը գետին ընկապ մահացած:

Սակայն խելոք նժույզը չե կանգ առնում. առ կանչները ցից՝ նա զգուշ առաջ ե բայլում ժայռերի վրայով. Յեվ զգում ե Արագվան, վոր իմաստուն կենդանին չե կորցնում ճանապարհը:

Գուղն իր անհաջողությունը տեսնելով՝ ցըիվ տվեց մատախուզը, փչեց...

Յեվ վեր կացան մըրիկն ու բուքը:

Վորնաց քամին լեռներում ու հարվածեց ժայռերին ու կիրճերին. Սարսեցին ու տնբացին ժայռերը, իսկ քամին յետ դարձավ հեծեծալով ու խացրեց ամեն բան... Տեղաց ծյուն սառցե ասեղների նման, յեվ վո՞րտեղից եր նա զալիս –յերկնքի՞ց թե լեռներից – վոչինչ չի յերեփում. Յեվ քամու մոնցունի հետևակում եր Լեռնային Վոզու հրատողն ու ծիծաղը...:

Ճանապարհն անհետացավ: Զյունի կույտերը
բլրացան ու ծածկեցին ամեն բան: Ձին մինչեվ փոքր
խրվում եր նրանց մեջ: Վերջապես ուժահատ՝ նա ծընկ-
ների վրա ընկավ: Արագվան իջավ թամրից, մոտե-
ցավ իր հավատարիմ ընկերին յեվ համբուրեց նրա-
արտասվալի աչքերը:

Զարհութելի յեր բուքն ու բորանը. ամբողջ տարածության վրա չեր յերելում վոչ մի շնչափոր եակ. յերելում եր միայն Սեփ-Զիափորը, վոր պայքարում եր Լեռնային Վոզու արհավիրքների դեմ, յեկ զգաց- վում Լեռնային Վոզին, վոր հրհուում ու ծիծաղում եր իր զոհի վրա:

Զին նորից վոտի յելավ յեվ սկսեց շարունակել
ճանապարհը։ Հանկարծ կանգ առան մի անդնդի զըլ-
խին։ Անդնդի տակ տարածվում եր Յերանության
խին։ Անդնդի ուր ամեն ինչ խաղաղ եր ու հանգիստ։ Յե-
շովիտը, ուր ամեն ինչ խաղաղ եր ու հանգիստ։ Յե-
րեվաց մինչեւ անգամ Դուդարի Խրճիթը յեվ Դոսան-
նան, վոր կուժն ուսին աղբյուրից ջուր եր բերում։
Բայց յերկար եր ճանապարհը, յերկար ելին այն շա-
բայց յերկար եր ճանապարհը, յերկար ելին այն շա-

Հանկարծ ճըչաց Սիկ-Զիսվորը՝ փոչաց առողջեւ յեվ իրան ցած նետեց անդունդ ..

Արագվան կանգնած ե Յերանության Հովտում
ու ախուր նայում ե իր ձիուն, վոր փշում ե վերջին
շունչը. Նրա վոտները փշրված են, զրուխը կոտրված.
Քրտների հետ խառն հոսում ե Նրա վրայից աղբյուրի
պիս արյունը. Զոր ե աշխատում ծերուկ Դուդարը
Նրան դեղ ու դարմանով ողնել:

Դրան ու շուրջ մասնաւորին կենդանին յավ ար-
շունչը փէց հավատարիմ կաթիներ ցոլացին Սևվ-Զիավորի ազքե-
րում. . .

Դուդարի խրճիթում վառվում ե կրակը: Արագ-
վան նստած ե տիսուր, իսկ Դոսաննան գուրգուրում
ե ու ծառայում իր փեսացուխն: Դուդարը տանը չե-
գնացել ե ուրիշ լիննականների հետ զրուցի:

վան, — Դուդն ինձ հետապնդում ե, նա նախանձում ե ինձ, բայց յես չեմ զիջանի նրան իմ սիրածը:

Այդ ժամանակ Դոսաննան նկատեց Սրազվայի ճակատին արյան շիթ, նա վախեցած նչաց ու փաթաթվեց իր նշանածի վզով... Բայց լեռան կողմից լսվեց խուլ սպառնալի դրդոց, վոր հետքնետե ուժեղանում եր, ուժեղանում.. Հանկարծ յերկիրը թրնդաց, ցնցվեց խրճիթն ու նրա մեջ տիրեց զարհուրելի խավար: Լեռնային Վոզին եր այն, վոր զցեց լեռան գագաթից ձյան հյուսը:

Խրճիթը թաղվեց ձյան հյուսի տակ յեվ նշանվածները կտրվեցին լուս աշխարհից:

Անցնում են ժամեր յեվ բաղզը հաղթում ե նըրանց, Ընդհատվեցին սիրային զրոյցներն ու փաղաքշանրները: Նշանվածները նստած են իրարից հեռու: Նրանք մտածում են հիմա ուտելիքի մասին: Բայց դրսից վոչ մի ոգնություն չի գալի:

Յերկրորդ որը Դոսաննան գտավ թարեքի վրա մի չոր բաղարն ու պանրի կտոր: Նրանք փոքր ինչ հագեցրին բաղզը:

Յերրորդ որն Սրազվան կրծեց իր բալարանները, իսկ Դոսաննան՝ պատերի վրա բուսած մամուռը:

Չորրորդ որն լնկած եր հատակի վրա Դոսաննան թուլացած ու լաց եր լինում, իսկ Սրազվան կատաղած դեգերում եր խրճիթում յեվ բոռնցըներով պատերը բանդել ճգնում... Հանկարծ նա կանգ առավ... խելագարի հայացը ծգեց համեղ Դոսաննայի վրա յեվ մոռացված՝ հարծակվեց վրան ու ատամ-

ները խրեց նրա ուսի մեջ... բայց, ահա լսվում են ըլունգի ու մարդկանց խուլ ծայներ...

Սրազվան ուշքի յեկավ... Խրճիթի դուռը ծյան հյուսից ազատված՝ բացվեց: Մտան Դուդարն յեվ ուրիշ լեռնականներ...

Սեվ-Զիավորն այլայլված դուրս յեկավ խրճիթից յեվ հեռացավ Յերանության Հովտից... Դոսաննան արհամարհանքով նայեց նրա յետեվից...

Հրճվեց Լեռնային Վոզին ու հրբերաց: Նրա հրբերուոցն անցավ սարեր ու ծորեր... յեվ հրբերուոցի հետ թափվեցին լեռան գլխից ժայռեր ու հողակույտեր յեվ կործանեցին իրոնների առւլը:

Վոչոք ըլ մնաց կենդանի այն առվից միայն Դոսաննան եր, վորին հափշտակեց Լեռնային Վոզին...

Յետ նայեց Սեվ-Զիավորն ու տեսավ բարուրանու յեղող առւլը: Հանկարծ լսեց նա կտոջ մի ճիչ չեանդ յեղող առւլը: Հանկարծ լսեց նա կտոջ մի ճիչ սաննային:

— Ճե՞յ նենզավոր Գուդ, — գոռաց նա, — հիմա ել չես պրծնի իմ ծեռից: Յեվ սլացավ Լեռնային Վոզու յետեվից:

Վոչ ժայռերն են արգելք լինում, վոչ խիտ անտառները: Գուգը վազում ե անընդհատ Դոսաննան զրկած, իսկ նրա յետեվից՝ զարհուրելի Սեվ-Զիավորը դաշույնը մերկացրած:

— Յեւտ փախիր, հանդուզն հողեղին, — գոռաց կեռնալին Վորին, — յեւտ փախիր...

— Կանգ առ, տմարդի Գուղ, վործենք մեր ուժերը...

— Հեռացի՛ր, մա՛հկանացու, հեռացի՛ր...

— Չեմ զիջանի թեզ իմ Դոսաննան, կի՞ն Գուղ, — պատասխանում ե Սեվ-Զիալորը:

Նրանց աչքի առաջ բացիկց մի ժայռ: Գուղի բնակարանի դուռն եր այն: Գուղը ներս թռավ մեզը, բայց դեռ ժայռը չեր փակվել, յերբ նետի պես ներս սլացավ Արագվան նրա յետեվից...

Յեվ դղրդաց Յերանության Հովիտը. վորոտացին ամպերը, ճաքճաքեցին կայծակները...

Իսկ թե ինչ պատահեց յեռան խորքում, մինչեվ հիմա հայտնի չե վոչ մի մահկանացուի...

Պատառվեց ժայռն ու դուրս ժայթքեց նրա միջից կատաղի Արագվան իր հետն առած իր Դոսաննալին: Բայց Արագվան այլեվս այն զարհուրելի Սեվ-Զիալորը չեր. դա փրփրուն Արագվա գետն եր, վոր իր մեջն եր առել Դոնի-Ճիզջիտուին*):

Մոնչալով, վշշալով հարձակվեց Արագվան Գուղ լեռան վրա յեվ սկսեց ծեծել յեվ ավերել նրան, իսկ լեռը փշրում եր նրա ալիքները...

Այսպիսով սկսվեց Արագվա գետի յեվ Գուղ լեռան պայքարը:

Կործանեց Արագվան Գուղի շքեղ պետությունը,

տապալեց կուսական անտառն յեվ լոեց այնտեղ դրախտային թռչունների համերզը... ընդհատվեց յեղնիկ-ների ազատ խաղը... Անմահության Աղբյու կուլը զնաց փրփրուն զետին...

Անցան դարեր, բայց Մթիուլեթյան Արագվան յեվ Գուղ լեռը դեռ չեն հաշտվել իրար հետ... Յեվ զարհուրելի յե հիմա այն հովիտը, վոր մի ժամանակ Յերանության Հովիտ եր կողըում...

Նրա անունը Սատանայի Հովիտ ե հիմա:

Խաղաղ ու լուսնկա գիշերներն Արագվայի խոտցի հետ լսվում ե մի աղջկա ծայն: Դա Դոսաննան ե՝ Դոնի-Ճիզջիտուն, վոր դուրս զարով, զրի միջից ու նստելով ժայռոտ ափին՝ լաց ե լինում իր կորցրած, այլանդակված սերը...

Զրի կույսը թշնամի դարձավ բոլոր նորահարս-ներին: Յեվ լեռը նրանք անցնում են գետի միջով, նրա բռնում ե նրանց վեշերից, բաշում ե գետի խոր-քը յեվ խեղդում նրա մեջ....

1889 թ. Պետերբուրգ

*) Իրոնիքն Զրի կույս:

«Յերանության Հովհանք» («Անոնակին Վագիկ» անունով) տրպ-
վեց առաջին անգամ «Ազրուր»-ի 1889 թվականի № № 5-6-ում,
ապա ուսուելիքն լիդվով՝ «Всемирная Иллюстрация»-ի գրական
հավելված «Трудъ»-ի մեջ 1891 թվին:

ՐՈՒԹԱՎԵԼՈՒՄ ՍԵՐԸ

Նվեր իմ մայր ՅԵԳՎԻԹԻՒԻ ԻԿՇԱՏԱԿԻՐ
(† 2 ապրիլ 1919 թ.)

Բարձր լիւներից մառախուզն իջավ.
Լուսինն ե ժպտում ծընփառ Յալբուսին,
Յեկ ինչպես գոհար՝ վառվում ե հրճված
Յալբուսն ալեվոր, Խնչոր տեղ հեռվում
Ծեծվում ե, գոչում ջրվեժը անդուր.
Մի ինչոր տեղից վոռնում ե տրխոր
Զենով բորենին...

Յերկնքի, յերկրի
Միջեւին յերեվաց մի կախարդական
Հրաշալի ամրոց կախված ե արդյոք
Նա մութ ամպերից, թե՞ տնկված ե նա
Են ժեռի զլխին, վոր չի յերեվում:

Ամրոցի միջում շինված ե պալատ,
Մի շըբեղ պալատ, հրաշալի պալատ.
Յեկ են պալատում թամար թագուհին*)

*) Թամար թագուհու ժամանակ (1184-1219)
Արաստանը հասավ իր քաղաքական և կուլտուրական
զարգացման ամենաբարձր աստիճանին:

Խնճույք ե տախս իր իշխաններին:
Բարձր գահույքին թամար թագուհին
Բազմած ե, զիսին թագն աղամանդի:
Զահերի լուսով թագն ե վառվըռում,
Սակայն ավելի վառվում են նըրա
Աչքերը սեվ-սեվ: Սեղանն ե պատել
Վուկեկար փարչի, թափշե շորերով,
Առանց զենքերի, առանց զըրահի
Դիդեբուլների^{*)} կաճառը խըրոխտ:

Արդեն վերջացավ ռազմը հաղթական:
Զարդված ե սեղուկ թշնամին սաստիկ.
Յեվ փառապրսակ յեվ ըսպիազարդ
Իշխաններն իրանց մեծ հայրենիքում
Տեսնում են իրար կրկին կենդանի....:
Բայց կռվի դաշտում շատերն են ընկեր:
Ու վողորմաթամն ըսպանվածների
Խըմում են նրբանք զիսվու¹⁾ պողերով:

Հեռու անկյունում՝ զուխը կախ զըցած՝
Նստած ե տըխուր Ռուսթավցի²⁾ Շոթան:
Նա չի մասնակցում վոչ ուրախության,
Վոչ իշխանների հրճվալի, գինու
Աղաղակներին: Յերեսն ե տժզուն,
Մեզքը կուչ յեկած, քընարը փոշու,

¹⁾ Վրացերեն՝ մեծամեծներ, իշխաններ:

²⁾ Զիսվի—Կովկասյան լեռների բարձր մասերում
ապրող վայրի վոչխար հսկաչական պողերով («կովկասյան տուր»):

³⁾ Ռուսթավը ներկայումս ել գոյութիւն ունի:
Գյուղ ե Զավախքում:

Մազը խըմբնված, յեվ են ահազին
Աչքերը խոսուն՝ գետին խոնարհած:

— Ի՞մ գուսան, — ասավ թամար թագուհին,
Ինչու յես տըխուր, ժպտա՛, ծիծաղի՛ր:

— Քո թուրն, ի՞մ արքա,²⁾ թող կտրուկ լինի,
Յես վո՞նց ծիծաղեմ, յերբ սիրուս ե լախի:

— Ի՞նչ ժամ ե լալու, ի՞մ ընտիր գուսան,
Զե՞ վոր հայրենիքդ ազատ ե ու մեծ:

— Քո թուրն, ի՞մ արքա, թող կտրուկ լինի,
Հայրենիքս ազատ, բայց յես եմ զերի:

— Քո թուրն, ի՞մ արքա, թող կտրուկ լինի,
Մեծ Մաջլաջուննեն³⁾ գուսանիդ դոշին
Չողել ե, — ասավ փուչ միմոս Բենի⁴⁾,
Ու հրոհըռացին հյուրերն աղմըկով:
Բայց բուսթավելին չը պատասխանեց,
Առավ իր քընարն ու տխուր յերգեց.

«Խավար ե զիշերն ամպամած հովտում,
Շուշանի գրկին թիթեռն ե նիրհում.

²⁾ Թամար թագուհուն վրացիք մեծարում են «արքա» տիտղոսով («թամար-մեփե»):

³⁾ Մաջլաջունան վրացիների զիշերային վոզին ե:
Քնի մեջ զառանցողների համար վրացիք ասում են.

«Մաջլաջունան նըա դոշին պանկել ե»:

⁴⁾ Բենի ծաղրածուն՝ ըստ ավանդության հայ եր:

Հովք թիթեռին նանի՞կ ե յերգում,
Շուշանը հովտի մեղմիկ որորվում...
Գրկվեցե՛ք ամուր—վոչոք չի տեսնում.
Թե՛ ծաղիկ, թե՛ խոտ մըտած են խոր քուն...

Բայց հովտում հովքի խարույկը վառվեց.
Փայլիայած թիթեռն են հուրը տեսավ.
Տեսավ ու հուզվեց, սիրեց ու զերվեց,
Իր ընկեր շուշանն¹⁾ խապառ մոռացավ.
Թըռավ, շըշընջաց. «Ճո՛ր, սիրում ես քեզ»:
Շուրջը թըռթբուաց ու մեղըն երվեց:

Թիթեռի նըման յես ել եմ զերվել,
Յես միան մահվան են հուրն եմ տեսնում.
Շուշանը հովտի վաղուց մոռացել
Են մահվան միայն հուրն ե զրրավում:
Ոհ, են հուրը, հուրն ինձ պիտի երի...
Վայ քո սել որին, խեղճ Ռուսթավելի»:

Ի՞նչ վիշտ ե տանջում քեզ, ի՞մ խեղճ գուսան,
Մի՞թե չեմ կարող վիշտարդ ամոքել,—
Ասավ հրաշալի Թամար թագուհին:
Բայց զո՞ թամադեն,²⁾ քաջ Զաքար ամիր
Սպասալարն³⁾ անհաղթ, հոնքերը կիտեց:

¹⁾ Հստ ավանդության՝ Շոթա Ռուսթավելին կին ուներ:

²⁾ Թամադա՝ սեղանի վարիչը, ընտրված բազմականներից:

³⁾ Զաքար «ամիր-սպասարկարը» (վրաց զորքերի սպարապետը) Արդության-Յերկայնարազուկ իշխանական տոհմի նախահալըն եր:

— Մի՞թե քիչ վշտեր ուազմերում տևանք:
Մեր սեվ-սեվ մազեր վոչ թե տարիից,
Հենց եղ վշտերից սպիտակ են դառել:
Հերիք չե՞ միթե, վոր սակավաղեալ
Ուրախ ժամն անգամ վշտի յեր փոխում:

Բայց յերը հրաշալի Թամար թագուհին
Գըցեց իր խորին հայացքը վրբեն,
Ել բան ըլ խոսեց են զոռ թամադեն,
Քաջ Զաքար ամիր-սպասալարն անհաղթ:

Ու նորից խոսեց Ռուսթավցի Շոթան.
«Քո թուրն, ի՞մ արքա, թող կտրուկ լինի.
Են հուրը, վոր ինձ իրան ե քաշում,
Չեմ կարում տանել. վրկել նըրանից
Ել հընար ըլկա: Շուտով կը մեռնի
Քո գուսան Շոթան: Բայց քեզ առաջուց
Տալիս եմ մի զիրք՝ իբրեւ հիշատակ:
Յերք յես կը մեռնեմ, զիրքը կը կարդաս,
Հետո կը թողնես մեր սերունդներին.
Նըրանիք ել կարդան ու թող իմանան,
Վոր մի տարաբաղդ գուսան ե յեղել
Սշխարհիս վրա, Շոթա անունով:

— Եղ զիրքը կարդա՛, Շոթացա՛ն, — ասավ
Քաջ Զաքար ամիր-սպասալարն անհաղթ:

— Զե՛, չե՛, Շո՛թացան, զիրքը դի՛ր գրպան, —
Ասավ են միմոս, վուչ միմոս Բենին:

— կարդա՛, իմ գուսան, Թամարն հրամայեց:

Յեվ Ռուսթավելին խորը հառաջեց.

Հանեց իր ծոցից ու ձենով կարդաց

Իր «Ընձենավոր»⁸⁾ վեպը աննրման...

Պատմում ե Շոթան, Ռուսթավցի գուսանն,

«Արեվից սիրուն» Նեստան-Դարեջան

Արքայազնուհու շուրբն ու ճոխություն

Ու հնդիկ «առյուծ», «կիսամայա լուսին»

Սեգ Տարիելի ուժն, արիություն,

Հավատարմություն... Պատմում ե Շոթան,

Ռուսթավցի գուսանն, արտասուրներով,

Տանջաներով զեղուն սերը անհատնում,

Ու սիրող յարի սար ու ծոր ընկած,

Սիրածից անջատ թափառումն յերկար...

Յեվ գոռող հյուրերն հուզվել են արդեն.

⁸⁾ «Ընձենավոր» վոտանավոր վեպ եւ Վեպի գլխավոր հերոսն և հնդկական զորքերի սպարապետ Տարիելը («Ընձենավոր»-ը՝ ընձի մորթով զգեստավորվածը), իսկ հերոսուհին և Հնդկաստանի արքայազնուհի Նեստան-Դարեջանը: Վերջինս գերի ընկած Քաջաստան: Տարիելը (ընձենավորը) յերկար թափառումներից, բազմաթիվ արկածներից հետո, իր համախոհների ոգնությամբ, ազատեց Նեստան-Դարեջանին զերությունից:

Կարծես կախարդեց գուսանը նրանց.

Սրտերն են ազդու արձագանգ տալիս

Յերգչին ու բնարի թըրթըռումներին:

Յերբոր նա պատմում է զեղեցկությունն

Ու արիությունն, հյուրերն են հրճվում,

իսկ յերը նա պատմում է վատ թշնամու

Վորոգայթը չար, մըռընչում են գոռ.

Ահա նա պատմեց լացը սիրողի —

Լալիս են նրանք յերեխի նըման,

Զայնակից լինում խեղճ Տարիելին....

Վերջապես հնդիկ «առյուծը» գրտավ՝

Սեգ ընձենավորն՝ իր սիրեկանին —

«Արեվից սիրուն» Նեստան-Դարեջան

Արքայազնուհուն... յեվ սիրողների

Իղձը կատարվեց: Քընարը հնչեց

Սվելի թուիչ, զըվարթ, կենդանի.

Խնդացին իսկուն դյութված, մոռացված

Հյուրերը խրորխս... Բայց կրկին փոխվեց

Քնարի յեղանակ: —

Յերգեց Ռուսթավցի

Գուսանը՝ Շոթան՝ վերջերգ խորիմաստ...

Բայց նա չեր յերգում: Վոչ մի բառ ըլկար

Ել նըրա յերգում: Նա լուռ եր. միայն

Դեմքըն եր խոսում, դեմքը տանջըլում...

Յեվ այն անբարբառ յերգին ծայնակից՝

Քընարն եր յերգում, լալիս, տանջըլում,

Քընարն եր դողում, մարում, զողանջում

Անբացատրելի խոր հնջուններում...

Յեվ հանկարծ տըրիաց սիրտը հյուրերի՝
կարծես սպառնացող վըտանզի առաջ:
Ի՞նչ քան եր արդյոք գուսանը յերգում:
Սե՞ր եր նա յերգում, հուսահատություն,
Թե՞ հույս, աղաչանք—վոչոք չիմացավ:
Իմացավ միայն փուչ միմոս Բենին,
Վոր վիրավորի որհասի ժամի
Կյանքի ու մահվան կըոիմ եր յերգում...

Գուսանը լըուեց: Վերջացըել եր նա:
Տիրեց պալատում խորին լըուություն.
Ամենքի լեզուն կարծես պապանձվեց,
Վոչ մի խոսք ասել չեն համարձակվում...

Յեվ մունջ ամբոցում արլարը կանչեց...

Հանկարծ ըսթափկեց Թամար թագուհին:
— Գուսաւն, —ասավ նա. —ի՞նչ ես ցանկանում:
«Ընձենավորիդ» յես զին եմ դրնում
Անըսպառ իմ զանձն ու իշխանությունն...

Յեվ Ռուսթավելին վերկացավ տեղից,
Խոնարհեց Թամար թագուհու առաջ.
Գիրը ըսկիրեց: Ապա կանգ առավ
Նայեց աչքերին, հրապավ լարերին
Յեվ եսպես յերգեց հրաշալի ձենով.

«Ճե՞յ դուք սեվ աչքեր, սեվ-կրակոտ աչքեր...
Մինչեվ յե՞րը երվեմ, զա՞ն Թամար, ա՞խ, զա՞ն,
Իմ սերը լըուիկ շատ ե ինձ տանջել,
Մինչ յե՞րը տանջըլիմ, զա՞ն Թամար, ա՞խ-զա՞ն...

Քո թուրն իշխաններ ցած զըցեց զահից,
Հալածված ազգեր քեզնով շունչ առան,
Աղքատն ոգտըլից քո հարուստ գանծից,
Վրաստանը փայլեց, զա՞ն Թամար, ա՞խ-զա՞ն:

Դո՞ւ եյիր, վոր շունչ տըվիր քրնարիս,
Քե՞զ յերազելով ապրել եմ միայն.
Դու են հուրն ես, դո՞ւ, վորն երում ե ինձ,
Դու են հուրն ես, դո՞ւ, զա՞ն Թամար, ա՞խ-զա՞ն:

Ի՞նչ կանեմ յես, ի՞նչ, գանձ, իշխանություն.
Յես, ազատ գուսանն յեվ աստանդականն.
Աղքատն իր հացից ինձ մասն ե հանում,
Յես կարիք չունեմ, զա՞ն Թամար, ա՞խ-զա՞ն:

Ճե՞յ Թամար արքա, հրաշալի՝ լուսին,
Յես քե՞զ եմ ուզում, քե՞զ միայն, միայն,
Քե՞զ՝ անգանձ, անթագ, քե՞զ՝ պարզ ու մեծին,
Քե՞զ սիրել միայն, զա՞ն Թամար, ա՞խ-զա՞ն»...

Յեվ տիրեց կրկին խորին լուություն...

Սըփըթնեց հանկարծ Թամար թագուհին.
— Գուսաւն, —նա զոռաց, —հանդո՞ւզն գուսան,
Դո՞ւրս իմ պալատից, դո՞ւրս Վրաստանից:
Յերբ յերրորդ անգամ արլարը կանչի,
Յես դուրս կուղարկեմ դահճճ-զինվորներ,
Ուր զանեն թե չե, զըլուխըդ կտրեն:
Բայց զրբիդ տեղ քեզ պարզեվ եմ տալիս
Իմ ամենալավ նրժույզը՝ Բազեն:
Ճեծիր, ազատվիր, թե կարողացար...

Յեկ Ռուսթավելին ապուշի նըման
Աչքիրը հառեց թամար թագուհուն...
Յեկ են աչքերից դուրս ցայտեց հանկարծ
Աղբյուրի նըման աղի արտասուր...

Յեկ վերջին անգամ գուսանը յերգեց.

«Վայ սի՞րտ կոտըրված, վայ քեզ, խեղճ յեր-
ղիչ...
Ել ո՞ւր ես ապրում, ասա՛, ո՞ւմ համար,
Կյանքը մահ դարձավ քեզ այսորվանից,
Ել ո՞ւր ես հնչում, իմ ընկեր քընար:

Վայ սի՞րտ կոտըրված, վայ քեզ, խեղճ յեր-
ղիչ...
Քո յերգն ու արժեքն վո՞նց շուտ մոռացան.
Վրութնդում են քեզ քո հայրենիքից,
Ել տուն, տեղ յունես, խեղճ աքսորական:

Դեհ զընա՛, կորի՛ր, ուր կուզես՝ կորի՛ր,
Գնա՛, զազաններում քեզ զըտի՛ր ընկեր,
Դայլին համբուրի՛ր, բորենու հետ քնի՛ր,
Հոտած զեշ փրնսուի՛ր, մարդու միսը կեր...

Գնա՛, զազան դարձի՛ր զազանների մեջ,
Սպամի՛ր մարդկային քո զգացմունք, բընազդ,
Դուցե դու մի որ մոռանաս յեկ քեզ,
Մոռանաս յեկ քո սերը տարաբաղդ...

Բայց քեզ, ո՞վ արքա, անիծում եմ յես,
Մինչեվ մահ խոր վիշտ քո սիրտը դաղի,

Հիշես ինծ, հիշես, խո՞րը հառաչես,
Չը հատնի աչքիցդ արտասուրն աղի...»

Գուսանը լրուց... կտրեց քընարի
Լարերը հանկարծ ու խրփեց գետնին
Քընարը, փրշրեց...

Յեկ Ռուսթավելու
Քընարն հրաշալի լրուց հավիտյան...

Աքլարը կրկին կանչեց ամրոցում...

Հանկարծ խրխրնջաց դրսումը Բազեն:
Յեկ Ռուսթավելին մի բոպե նայեց
Թամար թագուհուն կլանող աչքերով...
Ու դուրս սլացավ...
.

Յերբ յերբորդ անգամ
Աքլարը կանչեց, արաք ծիերով
Դահիճ-զինվորներ սար ու ծոր ընկած
Փընտրում եյին մեծ Ռուսթավելուն.
Բայց ել չըզդան վոչ մի տեղ նըրան:
Արդյոք ի՞նչ յեղավ, ո՞ւր անհետացավ
Դեռ մինչեվ հիմա չըդիտե վոչոք...

Բարձր յեռներից մառախուղն իջավ.
Լուսինն ե ժպտում ծընփառ Յալբուսին —
Յեկ ինչպես զոհար՝ վատվում ե հրճված
Յալբուսն ալելոր: Ինչոր տեղ հեռվում

Ծեծվում ե զոջում ջրվեժին անդուր
Մի ինչոր տեղից վոռնում ե տըխուր
Ձենով բորենին...

Յերկնքի, յերկրի
Միջեմս յերեվաց մի կախարդական
Հրաշալի ամրոց. կախված ե արդյոք
Նա մութ ամպերից, թե՞ տնկված ե նա
Են ժեռի գլխին, վոր չե յերեվում:

Ամրոցի միջում շինված ե պալատ,
Մի շրբեղ պալատ, հրաշալի պալատ,
Յեվ են պալատում Թամար թագուհին
Գետնին տարածված յեվ «Ընծենավորն»
Իր կրծքին սեղմած՝ լալիս ե մենակ.
Հառաջում ե նա, խորը հառաջում,
Աչքերից առատ արտասուր թափում
Յեվ Բուսթավելու անունը հիշում...


Մենակ՝ վշտերին իր անձը տըված՝
Նա Բուսթավելու անունն իր հիշում...

Այսպես կատարվեց անեծքը յերգչի...

1889 թ. Պետերբուրգ

Թամար թագուհին շատ գործեր արագ.
Շատ հրզոր պետեր ցած զցցեց զահից,
Շատ քաղաք, ամրոց իր ծեռով հիմնեց...
Բայց ամեն տարած հաղթության վրա
Խնդալու տեղակ հոգոց եր հանում,
Ամեն մի քաղաք, ամրոց հիմնելիս,
Հիմքերն եր թրջում իր արցունքներով:
Յեվ առանձնացած զիշերվա մըթում՝
Յերբ շուրջը լլուած, վոչոր չեր տեսնում,

«Բուսթավելու սերը» առաջին անդամ տպված է 1890 թ.
«Աղբիւր»-ի մարտ ամայիս համարում (Ծնողների Բաժնի մեջ):



ՑԱՆԿ

1. Նախերգանք. Արմավի կորիզները.	3
2. Հավլունի թուրբ.	7
3. Յերանության Հովիտ	25
4. Բուսթավելու սերը.	43

ՎՐԻՊԱԿՆԵՐ

ԵԶ ՏԾՂ	Տպված ե	Պիտի լինի
11 21	ընդհատեց իրան	ընդհատեց իրան.
18 4	Հավլունի թուրլ	Խալվա ծովլ...
23 1	յեղամն	յեղամն
27 2	բեռներից	բեռներից
» 13	նարանց	նրանց
» 14	հանդատ	հանդարտ
» 17	գագանի յես նմանում	գագանի յես նմանում:
» 18	նառում	նառում
30 3	թալանով	թալանով.
» 5	զզալով	զզալով
32 27	փոքրիկ յերկիր—հու- սիսային կովկասում	Փոքրիկ յերկիր Հյու- սիսային կովկասում
41 3	Աղբյուշ կուլը	Աղբյուշը կուլ

ԵՐԱՄԱԹՈՒՄ

ամիս մայիս

առաջ պատրակներ

առևտ աշխատ

անուշ

սիցընկույ

սկսող

ազարդուն

առանձին առ համար

ենթած

առանցքի

խոշոր

առ պատրակներ

առանձին պատրակներ

առ պատրակներ

ա ծախտ բա չ

մայիս ընտառից 12 11

պատ հետոյն 8 31

մայիս 1 25

սիցընկույ 2 12

սկսող 8 6

ազարդուն 11 1

առանձին առ համար 11 1

ենթած 8 1


խոշոր 8 08

խոշոր 2 1

առ պատրակներ 12 23

առանձին պատրակներ

առ պատ 8 1



ԳԻՆԸ 50 ԿՈՊԵԿ

Հեղինակի հասցեն՝ Յերևան, Սպահանքան փող. № 64
Կոմ Էրևան, սլ. Տփնդարյան, № 64, Ռ. Կ. Ասատրյան

ՀՀ Ազգային գրադարան



NL 0325040

20430